ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Տիգրան Ալեքսանյանի «Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգը» խորագրով, Է.00.03. «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանական համակարգերը շատ հին պատմություն ունեն: Այն նստակյաց քաղաքակրթությունների կենսապահովման և անվտանգությյան ամենահիմնական և կայուն միավորներից են: Կառուցողական-ճարտարապետական առումով դրանք արտացոլում են ժամանակի ռազմական ու շինարարական մտքի ամենակարևոր դրսևորումներից մեկը՝ ամենամեծ հնարավորություններն ունենալով ձևակերպել և փոփոխել մշակութային լանդշաֆտը նույնիսկ տասնյակ և հարյուրավոր կիլոմետրերի վրա: Բրոնզ-երկաթեդարյան ամրապատերն ու բերդշենները, ուրարտական և հելլենիստական դասական քաղաքներն ու ամրոցները, որ նախորդել են միջնադարին և երբեմն էլ ներառվել հետսագույն պաշոպանական կառույցների մեջ, ըստ էության ցուցադրում են հայաստանյան այն քաղաքակրթական շարքը, որ անվտանգության, ռազմական ստրատեգիայի ու տակտիկայի, զինտեխնիկայի, արհեստների դրսևորումներն են և մի անգամ չէ, որ արժանացել են հետազոտողների ուշադրությանն ու երբեմն էլ մանրամասն քննությանը:

Այսուհանդերձ, միջնադարյան պաշտպանական համակարգերը, որ հայ հանրույթի քաղաքական կացության, անկախության կամ դրա բացակայության անմիջական արտացոլումներն են, թե՛ կոնկրետ և թե՛ ընդհանուր-տարածքային առումով դեռ մնում են խիստ պակաս հետազոտված: Եթե քաղաքների, գյուղաքաղաքների դեպքում դրանք ավելի հստակ են մեզ ներկայանում, ապա առանձին ամրոցների, դրանց տարատեսակների, պաշտպանական փոխհարաբերությունների տեսանկետից մնում են շատ քիչ հետազոտված: Եվ եթե արտաքին նկարագրությունների, եզակի դեպքերում հատակագծային կամ չափագրական ինչ-որ նյութեր կան, ապա հնագիտական լիարժեք հետազոտությունների մասին, չնչին բացատությամբ, կարելի է խոսել միայն վերջին տարիներին:

Եվ հենց այս տեսկատից է, որ Տիգրան Ալեքսանյանի ընտրած «Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգը» հետազոտությունը հատուկ նորույթային և գիտական կարևորություն ունի: Հետագայում, երբ հրատարակման խնդիր դրվի՝ ես կառաջարկեի այն վերնագրել «Բերդի տարածաշրջանի զարգացած միջնադարյան ամրաշինական համակարգերը», քանի որ մի քանի չնչին բացառություններով, ատենախոսությունը ներկայացնում է հենց 10-13-րդ դարերի կառույցներն ու նյութական մշակույթը և, իհարկե, ողջ չորս դարերի համար դժվար է պատկերացնել միայն մեկ համակարգի գոյությունը, թեկուզ և սահմանափակ մի տարածքի վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և պրոֆեսիոնալ մակարդակով պատրաստված լայնածավալ հավելվածից:

Ներածության մեջ, ինչպես որ նման դեպքերում է, ներկայացվում են արդիականությունը, նպատակն ու խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը, տարածաշրջանի համառոտ պատմա-աշխարհագրական բնութագիրը, թեմայի ուսումնասիրման պատմությունը (էջ 3-11): Հատուկ ուզում եմ ընգծել մեթոդաբանություն բաժինը, ուր հեղինակը հավասարաչափ կարևորում է մատենագրական և արձանագրական սկզբնաղբյուրները, հնագիտական դաշտային հետազոտություններն ու հնագիտական նյութի քննությունը, չափագրական և տեղագրական հանույթների կազմումը և այլն: Սպասելի էր, որ հեղինակը կներկայացնի նաև թե ինչ մեթոդներով և չափանիշներով է քննելու և վերականգնելու իր իսկ անվանած համակարգը: Սակայն այն բացակայում է: Գուցե դա համալրվի հետագայում, մանավանդ որ երրորդ և չորրորդ գլուխներում և եզրակացություններում խոսվում է այդ մասին:

Ատենախոսության առաջին գլուխը, որ վերնագրված է «Միջնադարյան ամրոցների ուսումնասիրությունը», առկա նյութերի հիմամբ ներկայացվում են Նոր բերդ, Կածարեթ, Երգեվանք, Մածնաբերդ ամրոցները: Ուշագրավ է, որ ամրոցների նկարագրությանը նախորդում է տարածաշրջանի համառոտ քաղաքական

պատմությունը: Հատուկ շեշտենք, որ ատենախոսը հստակորեն սահմանազատում է Բագրատունյաց, սելջուկյան, Զաքարյան և մոնղոլական ժամանակաշրջանները, որոնք հաճախ ներկայացվում են տարբեր ամրությունների հիշատակմամբ ու դրանց դերակատարումների ցուցմամբ: Հետագա քննություններում հեղինակը մի անգամ չէ, որ փորձում է այս կամ այն ամրությունը կամ նրա որևէ բաղադրիչը կապել այդ ժամանակաշրջանների հետ, բայց ընդհանուր առմամբ տարբեր ժամանակների պաշտպանական համակարգերի տարբերակման տեսակետից նշյալ ամրոցների մերօրյա մնացորդները դեռ մեծ հնարավորություններ չեն տալիս:

Որպես կանոն, սկզբնաղբյուրների և տեղագրական նկարագրությունները և սեփական դաշտային դիտարկումների շնորհիվ ճշգրտվում են դրանց անունները, ներկայացվում կոորդինատները, նկարագրվում են դրանց բնական անառիկ դիրքը, որպես կանոն վավերացվում ամրապատերի և ջրամբարի մնացորդները: Հատուկ նշելի է Մածնաբերդի տեղադրության հստակեցման մանրամասն և համոզիչ քննությունը, Հայկ Եսայաին պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութի ներկայացումը (էջ 26-29):

Միանգամայն այլ է Տավուշ բերդի հանգամանքը, որի բազմակողմանի՝ աղբյուրագիտական, տեղագրական, ամրաշինական և հնագիտական քննությունը կազմում է սույն ատենախոսության առանցքը: Ինչպես իրավացիորեն վավերացնում է ատենախոսը. «Ի տարբերություն մյուս հուշարձանների, այն տարածաշրջանի միակ ամրոցն է, որը մեծամասամբ պեղվել է, հանգամանալից ուսումնասիրվել են կառուցման սկզբունքները, շինարարական փուլերը, մշակութային շերտերը, պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը և այլն: Տավուշ բերդն առանձնանում է նաև պահպանվածությամբ, չափերով, ինչպես նաև ժամանակի քաղաքական, մշակութային կյանքում ունեցած դերով: Տավուշ ամրոցում իրականացված հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները հանդիսանում են ատենախոսության ատաղձը, որոնք կարևոր են ոչ միայն քննվող տարածաշրջանի ամրաշինական համակարգի ուսումնասիրության, այլև մշակութային կյանքի, առևտրական կապերի, կենցաղի և արհեստների ուսումնասիրության համար»:

Երրորդ գլուխը, որ վերնագրված է «Բերդի տարածաշրջանի միջնադարյան պաշտպանական համակարգը» ես համարում եմ տեսական ու մեթոդական լուրջ ձեռքբերում: Քանի որ այն փորձում է առաջին երկու գլուխների վավերացումները դասդասել, կանոնակարգել և վերստեղծել շատ ավելի ընդհանուր մի պատկեր և պատասխանել այն հիմնական հարցին, թե ի վերջո արդյո՞ք խոսք է գնում պաշտպանական մի ամբողջական համակարգի մասին, ինչպես համոզված է հետազոտողը, և որոնք են նման եզրակացության փաստական տվյալները: Ինչպես նշում է ատենախոսը, խոսք է գնում մի համակարգի մասին, որն ունի կենտրոնական կամ գլխավոր ամրոց և նրա շուրջը կամ մատույցներում տեղակայված ավելի փոքր ամրոցներ, որոնք իրենց վրա են վերցնում առաջին հարվածը և նաև զգուշացման-ահազանգի գործառույթ իրականացնում (էջ 66-68): Ըստ հեղինակի բերած զուգահեռների այն ունիվերսալ դասական մի համակարգ է, որ այս կամ յան չափով վավերացվում է Հայաստանի տարբեր տարածաշրջաններում՝ Շիրակ, Սյունիք, Արցախ և այլն: Ես սա համարում եմ խիստ ուշագրավ, բայց և հայտնի չափով դեռ հիպոթետիկ եզրահանգում: Եվ դա բնական է, երբ գործ ունենք հայկական նյութի հիմամբ տեսականորեն դեռ չմշակված և մեթոդաբանորեն ոչ մինչև վերջ հստակեցված մոտեցումների հետ, ինչը, նորից շեշտեմ, բնական է նախնական բնույթի քննություններում:

Ասվածը վերաբերում է և ամրոց, բերդ, դղյակ եզրերի քննությանը: Դրանց տակ պիտի դնել զուտ պաշտպանական-ճարտարապետական, թե նաև սոցիալ-քաղաքական իմաստ ու գործառույթ: Սա մի խնդիր է, որ դեռ դրվում է որպես հարցադրում (էջ 69-72) և հետագա քննության կարիք ունի նոր հետազոտությունների հիմամբ: Կարող ենք վավերացնել, որ Տիգրան Ալեքսանյան բացել է մի շատ ուշագրավ և բարդ թեմա, որի համապարփակ հետազոտությունն ըստ էության դեռ սկզբնական փուլում է:

Եվ իհարկե, զուտ հնագիտական տեսակետից առանձնանում է չորրորդ գլուխը, ուր հեղինակը ներկայացնում է տարածաշրջանի պեղումներով ու պատահականորեն հայտնաբերված միջնադարյան հնագիտական նյութը. պեղումների ընթացքը, գտածոների տիպաբանությունը, զուգահեռներն ու ժամանակագրությունը:

օդալուսանկարները, ճարտարապետական կառույցների չափագրությունները, լուսանկարները, որոնք ներառված են 66 էջ կազմող հավելվածում:

Եզրակացնենք: Սա ակնհայտորեն նոր և ուշագրավ աշխատանք է, աշխատանք, որ կատարվել է ոչ միայն աղբյուրների ու առկա հետազոտությունների գերազանց իմացությամբ, այլ նաև սեփական դիտարկումների, դաշտային քննությունների և հատկապես հնագիտական պեղումների մանրմասն մասնագիտական քննությամբ: Եթե թույլ տրվի, ես այն կանվանեի նաև պիոներական աշխատանք, մեծ գործի առաջին մեծ և լուրջ քայլը: Որին կարծում եմ հետևելու են Հայաստանի տարբեր շրջաններում համանման հետազոտությունները:

Իմ արած դիտարկումները շատ ավելի ցանկություններ են և որևէ կերպ չեն ստվերում կատարված աշխատանքի գիտական արժանիքները: Եվ համոզված եմ, որ հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Համլետ Պետրոսյան, պ. գ. դ., պրոֆեսոր

Պ. գ. դ., պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
փոխտնօրեն Տորք Դալալյան

02 փետրվարի 2026 թ.